



Հաստատում եմ
«Արմենիա» ՀԲԿ գլխավոր տնօրեն,
բ.գ.դ., պրոֆեսոր Գ.Գ.Գրիգորյան
« » դեկտեմբերի 2019 թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

«Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման Լևոն Գրիգորի Խաչատրյանի «Օնտոսկրերի դեֆեկտների և արտահայտված ատրոֆիաների իմպլանտացիոն վերականգնման արդյունավետ մեթոդների մշակումը և կիրառումը» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Լ.Գ.Խաչատրյանի ատենախոսությունը նվիրված է ժամանակակից ստոմատոլոգիայի գիտագործնական առավել կարևոր նշանակություն ունեցող հարցերից մեկին՝ ծնոտոսկրերի տարբեր էթիոլոգիայի արատներով հիվանդների մոտ ոսկրավերականգնողական վիրահատական մեթոդների և ատամնային իմպլանտացիայի համակցմամբ համալիր բուժման հիմնախնդիրներին:

Ոսկրի հատվածային հատումից հետո ոսկրային արատի վերականգնման վիրահատական մեթոդները և ոսկրի վերականգնված հատվածում ոսկրագոյացման գործընթացները գնահատող ախտորոշիչ մեթոդները բազմազան են: Այդ մեթոդների կատարելագործման և կլինիկական գործունեությունում դրանց ներդրման հիմնախնդիրները շատ արդիական են ինչը և արտացոլված է դիտարկվող աշխատանքում:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հետազոտության արդյունքում մուլտիդիսցիպլինար մոտեցմամբ կատարելագործվել են ծնոտոսկրի հատվածային ոսկրահատումից հետո նրբուրթի ինքնածին ոսկրային բլոկով դեֆեկտի վերականգնման և վաղ իմպլանտացիայի համակցմամբ համալիր բուժման մեթոդները, ինչը բարձրացրել է այդ հիվանդների մոտ օրթոպեդիկ վերականգնման արդյունավետությունը:

Հիմնավորվել է ոսկրագոյացման գործընթացների վերահսկման և գնահատման նպատակով կիրառվող ոսկրի մետաբոլիզմի կենսաքիմիական մարկերների կիրառման կարևորությունը:

Կատարելագործվել է վերին ծնոտային ծոցի ախտահարումներով հիվանդների մոտ ծոցի բուժման և միաժամանակյա սինուս-լիֆտինգի մեթոդը էնդոսկոպի կիրառմամբ, ինչը թույլ է տվել բարձրացնել իմպլանտացիայի արդյունավետությունը և նվազեցնել բարդությունների առաջացման ռիսկերը:

Աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ կատարված աշխատանքների հիման վրա մշակվել և կոնսուլտացիոն գործունեությունում ներդրվել

է ոսկրավերականգնողական վիրահատական մեթոդների ալգորիթմ, որը թույլ է տալիս ընտրել բուժման համապատասխան ուղեցույց տարբեր էթիալոգիայի դեֆեկտներով հիվանդների ոսկրավերականգնողական վիրահատությունների ժամանակ:

Հիմնավորվել է վերին ծնոտոսկրերի արտահայտված ասրոֆիայով և ադենոիայով հիվանդների մոտ ոսկրավերականգնողական վիրահատությունների ցուցումների սահմանափակումների դեպքում բուժման այլընտրանքային մեթոդները՝ իմպլանտների տեղադրում վերին ծնոտի թմբի և այտոսկրի շրջանում, ինչը բարձրացնում է օրթոպեդիկ բուժման արդյունավետությունը:

Իմպլանտ-վերկանգնողական վիրահատություններից հետո ատամնային իմպլանտների օստեոինտեգրացիայի աստիճանի որոշումը ռեզոնանս-հաճախականության անալիզի մեթոդի կիրառմամբ թույլ է տալիս որոշել իմպլանտների ֆունկցիոնալ ծանրաբեռնվածության օպտիմալ ժամկետները:

Հետազոտության նյութը և կիրառված մեթոդների համապատասխանությունը

Աշխատանքը հիմնված է 2014-2019թ. ընթացքում հետազոտությունում ընդգրկված ծնոտոսկրերի տարբեր արատներով 138 (22-ից 69 տարեկան) հիվանդների մոտ կատարված համալիր բուժման արդյունքների վրա: Հեղինակի կողմից կազմվել են հիվանդների խմբեր, կլինիկական, ճառագայթային և ֆունկցիոնալ մեթոդների կիրառմամբ գնահատվել են հիվանդների տարբեր խմբերի մոտ բուժման արդյունավետությունը: Հեղինակի կողմից օգտագործվել են համարժեք վիճակագրական մեթոդներ՝ ցուցանիշների վերլուծության համար, ինչը ապահովել է ստացված տվյալների հավաստիությունը: Ատենախոսության մեջ ձևակերպված գիտական դրույթները հիմնավորված են բավարար կերպով և համապատասխանում են աշխատանքի առջև դրված նպատակին և խնդիրներին: Հետազոտության նյութի անհրաժեշտ ծավալը և ստացված տվյալները հեղինակին հնարավորություն են տալիս հիմնավորված եզրակացություններ անել: Ստացված արդյունքները ունեն տեսական և գործնական նշանակություն:

Ատենախոսության կառուցվածքը

Ատենախոսությունը հայերեն լեզվով է, լեզվական առումով գրագետ, իսկ գիտական տրամաբանությամբ՝ հստակ համակարգված: Այն ներկայացված է համակարգչային 152 էջի ծավալով, կազմված է ներածությունից, գրականության վերլուծությունն ու հետազոտության ընթացքում կիրառված եղանակներն արտացոլող բաժիններից, կլինիկական ուսումնասիրությունների ընթացքն ու արդյունքները լուսաբանող բաժիններից, արդյունքների քննարկման և ամփոփման բաժիններից, ինչպես նաև եզրահանգումներից, գործնական առաջարկություններից և օգտագործված գրական 148 աղբյուրների ցանկից: Վերջինս ընդգրկում է հիմնականում ժամանակակից միջազգային օտարալեզու գիտական հրապարակումներ: Ատենախոսությունը ձևավորված է բավարար թվով

աղյուսակներով, դիագրամաներով և կլինիկական դեպքերի նկարներով, որոնք հարստացնում են աշխատանքը և նյութի ընկալումը դարձնում ավելի մատչելի:

Ատենախոսության թեմայով հրատարակված 17 գիտական աշխատանքներում (այդ թվում 2-ը ազդեցության գործոն ունեցող գիտական ամսագրերում ու 5 միջազգային կոնգրեսների նյութերի ժողովածուներում) և սեղմագրում, լիովին արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Եզրակացություն

Այսպիսով, ներկայացված ատենախոսությունում կատարված է լիարժեք գիտական աշխատանք, որը լուսաբանում է գիտագործնական ստոմատոլոգիայի արդիական հիմնախնդիրներից մեկը, հիմնված է մեթոդաբանորեն ճշգրիտ ուրվագծված նպատակի, հետազոտության ժամանակակից եղանակների և վիճակագրորեն հավաստի տվյալների վրա:

Լևոն Գրիգորի Խաչատրյանի «Օնտոսկրերի դեֆեկտների և արտահայտված ատրոֆիաների իմպլանտացիոն վերականգնման արդյունավետ մեթոդների մշակումը և կիրառումը» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ հեղինակը արժանի է հայցվող կոչմանը:

Գրախոսականը քննարկվել և հաստատվել է «29» նոյեմբերի 2019 թ գիտական խորհրդի նիստում (արձանագրություն թիվ 11):

Արմենիա բժշկական կենտրոնի դիմաձևատային վիրաբուժության բաժանմունքի վարիչ, բ.գ.թ., դոցենտ՝

Ա.Գ.Սեպյան

բ.գ.թ., դոցենտ Սեպյանի ստորագրությունը հաստատում են «Արմենիա» ՀԲԿ -ի գիտական քարտուղար, բ.գ.դ.՝

Ռ.Գ. Մուրադյան

